ղեկութիւն և տալիս Զալալյան. «հետաքրքրական են մեզ համար հատկապես փոքրիկ մատրան արձանագրութիւնների մնացորդները ԺԳ. և ԺԴ. դարերից, վորոնք այժմ նույնպես չկան. դոցանից մեկն է «... ամենավեհ իշխանի Պռոշոյ եկեղեցիս և մանկան Էաչոյ և մեծահաւատ տիկնոջ Խոտանայ, յորժամ տէր էր տեղւոջս ...»։ Այստեղից դուշակել, թե «կառուցանող այսր տաճարի է նոյն ինքն Պռոշ իշխանն և մեծահաւատ կին նորա Խոտան», անկարելի է. նա այդ անունով կին չէ ունեցել, ինչպես կտեսնենք հետո. դժվար է նույնպես կարծել, թե Պռոշն է շինել այդ մատուռը. բայց շենքն անպայման ԺԳ. դարու գործ է, և Պռոշի ու նորա թոռ Էաչի մանկան հիշատակութիւնն ապացույց, վոր այդ վայրն էլ նորա տիրապետության տակ էր։ Այսպիսով Սրկղունք լերան ամբողջ հարավային ստորոտը՝ մինչև Արփա գետը Պռոշյանց սեպհականութիւն էր։

Սրկղունյաց սարից (Թաքյադյոնդյուրան) դեպի արևելահարաւ, Արկազից մոտ տասն վերստ հեռու, գտնվում է Դալիկ գագաթը, և սրա հարաւ—արևելյան փեշերի վերա Հերհեր աւանը, վոր յուր շրջակայքով, արձանագրութիւնների և Վարդաշենում պահված մի աւետարանի հիշատակարանի համաձայն, Շահուռնեցոց սեպհականութիւնն էր, ինչպես ցույց ենք տվել մի այլ տեղ *։ Շահուռնեցիք իշխում էին ըստ հիշատակարանի բացի Հերհերից (Երերան) և նույն տեղի



Բաշբյանդ, մնացորդ հին եկեղեցու. Պատկեր 10.

վանքից, վոր գտնվում է գյուղից դեպի հյուսիս, նաև «Քալատակին և այլ հայրենեաց»։ Թեպետ այս վերջին տեղերն անյայտ են և անորոշ, բայց պարզ է, վոր ընդարձակ չեր այն է ամփոփված եր Հերհերի վտակի հովտում. այն էլ վոչ ամբողջովին։ Պռոշյանց սահմաններն, ուրեմն ձգվում էին Արկազից էլ դեպի արևելք մինչև Դալիկ թափայի և Հերհերի ջրաբաշխ կազմող բլուրների արևմտյան փեշերը, իջնելով մինչև Արփայի ափերը։ Այս շրջանումն է, Արփային մոտ, Դելիկ թափայի հրաբուղխի լավաներով ծածկված բլուրների եզրասահմանում, անվանի Մոզը, Ստեփանոս Սյունեցու նահատակության վայրը **։ Մոզը՝ ավերակներին նայելով՝ բավական ընդարձակ ավան է յեղել, բայց հնության մնացորդներ և արձանագրութիւններ չեն գտնված, բացի հյուսիսային ձորագոգում մի քանի խաչարձանները։ Մոզից քիչ բարձր, գետի հոսանքն ի վեր, գտնվում է մի կամուրջ, վոր յերկու ափերը կապում է իրար հետ և ճանապարհը տանում է ուղիղ դեպի Ազատեր և ապա Մարտիրոս, վոր Պռոշյանց

«Կանգնեցաւ խաչս բարէխաւսթի Զալէխին /եւ եղբարաց s! իւրոց». Համ. Քաջբ. Անդ. 107.

* Զալ. Բ. 134։

* Христ. Вост. 1913. 231.

** Օրբ. ԼԱ. գլուխը. յեր. 131.